

Տրդատայ ի Հռոմ առ սուրբն Կոստանդիանոս¹» անորոշ խօսքը, և նախապէս՝ յիշատակը «Սեղբեստրոսի եպիսկոպոսին Հռոմայ որ ի նմանէ հալածանացն թագուցեալ էր ի Սորակտիոն լեառնն . . . որպէս համառօտ ուսուցանէ քեզ Ազաթանգեղոս²», և յետոյ Եղիշէի ալ մէկ խորհրդաւոր խօսքը «զհաւատան որ ի Քրիստոս ընկալեալ ի Ս. եպիսկոպոսապետէն Հռոմայ» Ս. Յովսէփ կաթողիկոսի նամակին մէջ առ Թէոդոս փոքր³, բանասէրներու մէջ երկար քննուած եւ ընդհանրապէս ամէնքն ալ կասկածելի կը մնան և ոչ պատմական. հաւանօրէն արձագանգն է այդ Ս. Գրիգորի և Տրդատայ դաշինքին ի Կեսարիա կնքած: Որուն վերայ ուշ դարերուն ձեւուած է նաեւ անհարազատ «Թողլթ դաշանց»ը և Ունիթորական շրջանին ունեցած է իր վերջին խմբագրութիւնը ինչպէս կը ցուցնէ լեզուն՝ որով շարադրուած է:

Թողլով այս առօրեայ ինքն որուն պատմական փաստերը տարակոյսի տակ են, կը հանդիպինք Հռոմի մէջ ուրիշ պանդուխտի մը որ այնքան մեծ անուն թողած է՝ Պարոյր Հայկազն որ լատին ձեւով եղած է Պրոյիքսիոս. իր մասին բարեբախտաբար մանրամասն տեղեկութիւններ աւանդած է մեզի Եւնաբիոս յոյն պատմագիրը՝ ժամանակակից Պարոյրի, ինչպէս նաեւ Գրիգոր Աստուածաբան որ Պարոյրի նուիրած տղերուն մէջ գանի արեգակ մը կը նկատէ միւս հռետորներուն քով՝ որոնք աղօտալոյս ջահեր են, և թէ՛ ո՛չ մէկ մահացու կրնայ մրցիլ Պարոյրի հետ հռետորական արուեստին մէջ:

Պարոյր նախ Անտիոք կը պանդխտի, անկից կ'անցնի Աթէնք, ուր կը պատմութիւնը աղքատութեան մէջ անձուկ սէրը իր Հեփեստիոն ընկերին հետ:

Աթէնքի մէջ երեւան կու գայ Պարոյրի հռետորական մեծ տաղանդը որ կը հրապուրէ Փոքր Ասիան, Եգիպտոսն ու Լիբիան, ու ինչպէս կը գրէ Հ. Գարեգին Զարբանաւեան, «Պրոյիքսիոսի փառքը անանկ հայրենիք մը ունեցաւ՝ որուն սահ-

մաններն դեռ եւս անձանթ երկիրներ են»:

Մրցակից հակառակորդներ սակայն կը հալածեն ու կ'աքսորեն զինքն ի սկզբան. կրկին կը դառնայ Պարոյր և իր պերճախօսութեամբ զարմանք ու նախանձ կ'անեցնէ: Կոստանդ կայսեր հրաւերով երբ Գաղղիա կ'անցնի, հոն ալ նոր դափնիներ կը շահի. ուսկից կայսրը զինք Հռոմ կը զրկէ. հոս է ուրեմն որ Պարոյր իր հանձարի մէկ ցոլքը ցոյց կու տայ Հռոմայեցիներուն՝ որոնք իրմէ խնդրած էին յաւիտենական քաղաքին վրայ դրուատիք մը խօսիլ: Այդ գերազանց ճառին համար էր որ կանգնեցին պղնձէ արձանը՝ համբաւուոր ծանօթ ընծայականով. «Regina Regum Roma, Regi Eloquentiae = Թագուհին Թագաւորաց Հռոմ, Թագաւորի Բանին»:

Ասկից յետոյ նորէն Աթէնք կը դառնայ. ուր ապա կը ստիպուի հրաժարիլ իր հռետորական բեմէն ի սէր քրիստոնէութեան՝ զոր կը հալածէր Յուլիանոս ուրացող: Կը մեռնի 95ամեայ խոր ծեւրութեան մէջ, թողլով իր համբաւին արժանի աշակերտներ՝ որպիսին են մեծն Բարսեղ և Աստուածաբանը:

Աւարիկոս իր յիշեալ յօդուածին մէջ ակնարկ մ'իսկ չունի Պարոյրի մասին:

Կ'անցնինք վաղեմի ուրիշ յիշատակներու որոնց մէջ ուխտաւորներու ղէմքեր է որ կը հանդիպին: Եւ ասիկա շատ բնական երեւոյթ մ'է: Երուսաղէմի տնօրինական տեղերը իրենց սրբազան հրապոյրով քաջած էին հայերն ալ, և հոն հնուց ունեցած ենք բազմաթիւ վանքեր և ճգնաբաններ. աւանդութիւնը մինչեւ Լուսաւորչի օրերը կը տանի համբաւաւոր Ս. Յակոբի հիմնարկութիւնը, թէեւ այդքան հնութեանց զբաղան հին վկայութիւններ չունինք Թեղարէն առաջ: Նուազ հրապոյր ունեցած չէ Հռոմ ալ, ուր կը հանգչէր Առաքելապետին մարմինը ինչպէս և Ս. Պօղոս:

1. Տե՛ս Խոր. Պատմ. Գիրք Բ. Գլ. 27. էջ 351. տպ. 1881. վ. Ս. Գ. - 2. Անդ. - 3. Եղիշէ. Պատմ. Գ. էջ 130. (տպ. 1893. էջ 132. վ. Ս. Գ.):